

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը ըստ է առաջադրում 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունների համար վճարում են
իրականացվող ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազգության հայեացք
ժողովրդի վրա. Թիֆլիսի լրագրողների հեռագիր-
ները. Նամակ կարգի. Նամակ խմբագրին. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Ազգությանը. Արտաքին լուրեր. ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ.
—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ խա-
բերդի դաշտը և պանդուխտ խարբերդիցին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊՐԱՊՈՒՄԱՆ ՀԱՅԵԱՑՎ ԺՈՂՈՎՐԻՒՄ

Յայտնի է, որ Հոսով ազգությունը (հաւանաւ)
իրար պատահելիս չեն կարողանում ծիծաղելով
պահել: Նրանք ծիծաղում էին ժողովրդի յիսարու-
թեան վրա, որ հաւատում էր իրանց բոլոր խաբե-
ութիւններին: Այդ ապագայի քաղաքի հոգը չէր
թէ ապագայում կը բացվին իրանց բոլոր խարբե-
րութիւնները: Նրանք հարկաւոր էին համարում
այդ խարբերութիւնը, որովհետեւ նա էր նրանց
բոլոր եկամուտների աղբիւրը և միւս կողմից է-
րաւորը էին համարում խաբել ժողովրդին, որով-
հետեւ նրանց կարծիքով յիսար ժողովուրդն անըն-
դունակ է ըմբռնելու ճշմարտութիւնը:

Այդ հայեացքը ժողովրդի վրա յատուկ է որով
ընտրութեան ու աշխարհայեացքի տեղ բոլոր
մարդկանց—լինին նրանք հոսովայի ազգու-
նեցիկները, եղբայրական քաղաքի, միջնադարեան կաթոլիկ
աբեղաներ, թէ մեր ժամանակակից խաւարամիտ
հրապարակախոսներ:

Այդ տեսակէտից մարդիկ բաժանվում են երկու
դասի,—փոքրամասնութիւնը համարվում է ընդու-
նակ ճանաչելու չարն ու բարին, իսկ մեծամաս-
նութիւնը դուրս գիտակցելու չնորհից և կարօտ
մշտական հողաբարձութեան: Յայտնի ճշմարտու-
թիւնը կայ ժողովրդին այդ տեսակէտից կը նշա-
նակի «մարդաբան չափ տալ խողերի առաջ»: Խո-
ղերն այժմ է խողաբան և ոչ թէ ճշմարտու-
թիւն—հաւա այդ հայեացքը պարզ արտայայտ-
ված:

Բոլորովին ուրիշ տեսակ են նայում ժողովրդի

ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ

ԽԱՐԲԵՐԴԻ ԴԱՇՏԸ ԵՒ ՊԱՆԴՈՒԽՏ ԽԱՐԲԵՐԴԻՑԻՆ

Խարբերդի դաշտը եղական դիրք կը գրաւէ
կեդրոնական Տաճկաստանի մէջ իր պողոտաներու-
թեամբ և գեղեցիկ տեսարաններով, մեզ համար
մի եղական դիրք կը գրաւէ և նրա համար, որ
իր ծոցի մէջ կը սնունդանէ մի ստուար ժողո-
վուրդ, որոյ մեծագոյն և կարող եմ համարձա-
կութեամբ ասել, գործն տարբեր հայեր կը կադ-
մեն:

Տեսած ենք Ներսիսը, Բագրատը, Բախանը,
կարծու Ուլան, բայց բերքերի դանաղանութեան
նկատուածով Արարատին արժանի քոյր միայն խա-
բերդի դաշտը կարելի է համարել, որը իր բերնն
ուռի, իր առատ ցորենը, իր բաւակը, իր տանն
ու խնձորը, իր խաչիաչը, իր առատ բանջարե-
ղէնները:

Նրկար ձուածն դաշտը հիւսիսային արևելքէն
հարաւային արևմուտք կը տարածվի 40—50
մղոն երկարութեամբ, 8—10 մղոն լայնութեամբ:
Վայոց ձիւսիսային արևելեան եզրերի վրա սե-
պացած կը կենայ խորտա Մաստարը, և իր եր-
կար բաղուններն միով խարբերդի դաշտը կը
գրկէ, միւսով նրա քոյրը Բալուի դաշտը կը
գրուէ: Եփրատը Բալուի լեռանց խոր անդնդխոր
խորքերի հետ մարմնակալ դուրս կը գալ լեռնա-
պատառ, բայց կարծես մի մոգական աղբեղու-
թեան տակ ընկնված փրփուրը յատուկ կը հա-
ւաքէ, հանգիստ պոյսներ կը գործէ Մաստարի
տոնից առաջ և վիշապի նման մէջքը բոլորով

վրա աղատամիտները: Նրանք բոլոր մարդկանց
հաւատարմութիւնը ընդունակ են համարում ըմբռնելու
ամենաբարձր ճշմարտութիւնը և բարոյական
ամենապիտիւն սկզբունքները: Այդ տեսակէտից ա-
մեն մարդ ընդունակ է զանազանելու չարը բարիից,
ինչպէս ամեն մարդ աչք ունի և կարող է տեսնել,
եթէ խաւարը չը խանգարի: Այդ է պատճառը
որ այդ հայեացքն ունեցող մարդիկ աշխատում
են ցրվել բարոյական խաւարը, որպէս զի ժող-
վուրդը կարողանայ տեսնել իր չարն ու բարին:
Ընդհակառակն, անկեղծ խաւարասէնները և փա-
րիսեցի խաւարապանները ամեն կերպ աշխատում
են զրկել ժողովրդին լոյսից: Առաջինները նրա
համար, որ կարծում են թէ խաւարի պոյն է մի-
այն, որ զսպում է զազանաբարոյ ժողովրդին,
իսկ վերջինները՝ որովհետեւ դիտեն, որ եթէ փա-
րատիկ մտքը և լոյս ծագի, ժողովուրդը կը տես-
նի իր կեղծ բարեկամները իսկական պատկերը և
հրաժարվելով կը հրաժարվի նրանցից:

Եթէ ամեն բան խաւարի առաքեալները կամ-
քով լինէր, նրանք թող չէին տայ, որ ժողովուրդը
ինքնուրոյնաբար մի քայլ անգամ անէր: Այդ աւ-
գուրները իրանք կը մտածէին ժողովրդի տեղ,
ամեն բան կը վճռէին նրա համար: Բայց այդ ան-
կարելի է, պէտք է լինում դիմել ժողովրդին և
յարմարվել նրա կամքին: Ինչպէս են վարվում
այդ դէպքում ազգուրները: Ժողովրդի կամքը նը-
րանք չեն յարգում, ճշմարտութիւնը հասկանալու
նրան անընդունակ են համարում, պարզ է որ
անկեղծ խոսել նրա հետ նրանք չեն կարող: Ինչ
էլ լինի պէտք է դրսւել այդ յիսար ժողովրդին.
մարդաբան թափել նրա առաջը չարքի և ահա
հրապարակ են դալիս կեղծ մարդաբանները...

Ազատամիտները դիմում են ժողովրդին, աշխա-
տում են աղբիւր նրա գիտակցութեան վրա: Նրանք
պարզ են խօսում, որովհետեւ անորոշ խօսքերով
ոչինչ ապացուցանել չէ կարելի: Նրանք ասում
են ժողովրդին՝ ահա մեր ծրագիրը, ահա մեր
մարդիկ, այդ ծրագիրը քո շահերն է պաշտպանում,
այդ մարդիկ քո անկեղծ բարեկամներն են ահա
այս և այս պատճառներով: Երբեմն սխալվում են

կանցնի Տերսիսի ծոցերի մէջ զահալված պա-
քարն առաջ տանելու: Խարբերդը դաշտի արեւ-
մտեան եզրը պարագծող համառ բլուրների
կործրէն կան ընկած քարաժայռի գագաթին է
թառեւ, պաշտպանողական է դիրքը, քան թէ
տիրապետական: Իսկ ծառերով ընդարձակ մը-
քանոցներով չըջապատված դիրքը դաշտի երե-
սին ցրված ուռնացեալ պուրակների կը նմա-
նին: Բնութեան այս օժտված տեսարանների ա-
ռաջ կանգնած մարդ մի տեսակ դառն ցատկ կը
գործէ—բախտախնդիր է հայը, պանդուխտայն
կեղծոտ յաճախումը տխուր սեռակութիւն է երկը
նրա համար. այն ինչ այլը հայրենի փուշը օտար
երկրի վարդի հետ չեն փոխանակել, մենք հայերս
մեր վարդը ոտքի տակ առած կը դնանք աշխարհի
ծայրերը օտարի փուշը որոնել. այն ինչ մեր
պողպատը դաշտը օտարի դարձացումն են գործը-
ռած, մեր հայ մշակը իր անդրը երեսի վրա թո-
ղելով կալիֆօրնիոյ խոպան հողը օտարի համար
կը կախղացնէ: Այն ինչ օտար երկրի գաղթելու
սովորութիւնը հայի տունն է քանդել, բայց տակա-
ւին դարաւոր փորձառութիւնը չը կարողացաւ մեզ
հասկացնել, թէ սա մեծ կորուստ, աններելի
յանցանք է հայրենիքի դէմ գործած:

Բայց խարբերդին իր պատասխանն ունի տա-
լու:

—Ինչ անեմ այդ գեղեցիկ տեսարանները, ինչ
անեմ այդ ուռնացած պուրակները, ինչ անեմ այդ
ընդարձակ դաշտը, երբ խմ չեն, երբ այլ անհատ-
ները կը վերաբերին:

Սա իրաւացի պատճառ է. Խարբերդի նահանգը
տակաւին աւատական դրութեամբ կը կառավար-
վի, և աւատապետը, քիչ բացառութեամբ, տա-
հիկներ են: Հայ գիւղացին ուրիշներէ սա տար-

ազատամիտները, երբեմն՝ ժողովուրդը, բայց նրանց
յարաբերութեան մարդկային բնաւորութիւնը դա-
նից չէ փոխվում—ազատամիտները իբրեւ մար-
դիկ դիմում են ժողովուրդը կազմող անհատներին
իրեն իրանց հաւատար մարդկանց:

Խաւարամիտները այդպէս չեն կարող վարվել:
Նրանք մարդաբան չունեն, իսկ եթէ ունենում էլ
են՝ իրանց համար են պահում և չեն ուզում դիմել
պէլ և բէյն և իր առաջը: Նրանք ապացուցանել
չեն կարող և համոզել չեն աշխատում: Նրանց
հարկաւոր են անորոշ խօսքեր, մոլթ ակնարկներ,
մտքերի պղտորումն: Տարածել կամեանք, վա-
խեցնել տկար խեղճեր և յետոյ պղտոր ջրում
ձուկ որսալ—հաւ խաւարամիտների սովորական
քաղաքականութիւնը: Երբ որ այդ աշխարհի՝ նրանք
կը բացականչեն—«դուք աշխատում էիք մոլորեց-
նել ժողովրդին, մեր նահապետական, առաքելի,
սուրբ ժողովրդին, բայց այդ ձեռք չաշողվեցա:
Երբ որ նրանց աշխատանքը դուր անցնի՝ նրանք
կաղաղակեն—«դուք յեռվում էք տխուր ամ-
բուսի վրա, իսկ մեզ կուսակից են բոլոր բանի-
րուն ու խոհուն մարդիկ»:

Եւ կան հաւատացողներ այդ ազգուրներին, ո-
րոնք սրտանց կը ցանկանային պահել մասսան
զարգացման ակադեմիային աստիճանի վրա և չը
թողնել, որ նա լուսաւորվի ու դառնայ ինքնագի-
տակցող ժողովուրդ:

Ինչ անի միամիտ ժողովուրդը, երբ որ յաճախ
մինչև անգամ տաղանդաւոր ու խելօք մարդիկ
ստիպված են լինում հաւատալ խաւարամիտնե-
րին:

Ահա մի հետաքրքիր օրինակ պատմութիւնից:
Ռուսաստանի լուսաւորված կայսր Ալեքսանդր
առաջինը մեծ վստահութիւն ունէր իր միլիտար
Սպերանսկու վրա և սաստիկ սիրում էր նրան:
Սպերանսկի օգտակար այդ վստահութիւնից
մեծամեծ օգուտներ տուց Ռուսաստանին: Նա է
սկիզբ դրել Ռուսաստանում միլիտարութիւնների,
պետական խորհրդի և ուրիշ այդպիսի հաստատու-
թիւնների, յետոյ նրա ջանքերի. հետեանքն էր
ուսուցող օրէնքների առաջին կանոնաւոր և լրի-

ւորութիւնը ունի, որ սա կարող է հողը գցել
հեռանալ. սակայն հողը գցել հեռանալ երկ-
րաբարձի համար դնալ ողջ ողջ գերեզման մտնել
կը նշանակէ: Հայ-մշակը այս այսպէս ըմբռնելով
վիզը ձկնի, լեզուին կապանք դրել՝ նուստաբար
կը կրէր ամեն ճնշում, կը գոհացնէր աղաչի այն
ամեն պահանջները, որ հողին ետքը կը գան դի
մի գոցէ աղան բարկանալ և դուրս անել իր
սեփական հողէն, լուս կը կրէր մինչև այն ժա-
մանակ, երբ շուտեալ գիւղացու ակնաչին հնչեց
Ամերիկայի փայլուն անունը: Խուփեց կաշկանդ-
ված հայ երիտասարդութիւնը դէպ արևմուտք, ա-
ռանց կռուելու ձեռնարկութեան հետանկը:

Ըստ տեղացեաց պատմութեան առաջին պատե-
հութեամբ գրեթէ անտանելի կը թվէր խարբերդ-
ցիին հայրենիքէն բաժանուիլ, թողուլ իր հարց
գերեզմանները, թողուլ մանաւանդ այն դիրքը, որ
օրրանն էր հողուրդը: Այսօր ինչպէս է—այսօր
Ամերիկան սովորական ճանապարհ է դարձել գնա-
լու համար միայն. տուն կայ որ մի երկու պան-
դուխտ չունենայ Ամերիկա:

Մի գեղեցիկ օր ընկերներէս միայն հետ Հիւսեյ-
նիկ իշխալ տեղւոյն պաղ ջուրերին այցելելու նպա-
տակով: Հիւսեյնիկը խարբերդի արևելեան կողմը
դաշտի եզրերին շինված մի մեծ գիւղ է մեծաւ մա-
սամբ հայաբնակ: Աղբիւրներն մեր այցելութիւնը
տալէ յետոյ հաղիւ Հիւսեյնիկ էինք մտած, երբ
տեղացի մի ծանօթ պատահեց մեզ և հրաւիրեց
իրան ընկերանալ, որը կը դնար տեղւոյն երիտա-
սարդաց ուսումնասիրական ընկերութեան ժողո-
վին ներկայ գտնվելու: Մեզ համար խիստ հաճելի
էր այսպիսի մի ժողովի ներկայ գտնվիլ և աչքով
տեսնել ուսման յուսակից աղաւթներ, որ կը ծա-
գէր և հայ գիւղացու հօրեղանի վրա: Կը շարու-

ժողովածուի (Сводъ законовъ) հրատարակութիւ-
նը: Բոլորը սրտանց յարգում էին այդ աղատամիտ
պետական գործիչին, այդ անհասկեր միլիտարին,
այդ անկաշառ պաշտօնեային, այդ վերին աստի-
ճանի ազնիւ մարդուն, բայց և հենց այդ պատճա-
ռով համարեա բոլորը ասում էին նրան, որով-
հետեւ նա խանգարում էր անաղիններին, ինտրի-
գաների, ինստիտուցիան ու կաշառակերութեան
սովորած աստիճանադիրների աչքը ծակում էր նա
իր առաքելութիւններով: Պէտք էր հեռացնել այդ
ազնիւ մարդուն, բայց կայսրը սիրում էր նրան:
Խաւարամիտները դիմում են իրանց մշտական
քաղաքականութեանը: Սպերանսկի յայտնի էր
իրեն համակրող եւրօպական կարգերի, իսկ այդ
ժամանակ Նապօլէոնի և Ալեքսանդր առաջինի
յարաբերութիւնները սկսում էին լարվել: Բաւա-
կան էր հաւատացնել կայսրը, որ Սպերանսկի
օգտակար նրա վստահութիւնից դաւաճանում է
նրան, և դանապան տեղեկութիւններ է հաղորդում
իր սիրած Ֆրանսիայի կայսր Նապօլէոնին, և
նրանք հասած կը լինէին իրանց նպատակին: Այդ-
պէս էլ արեցին: Միակիցան բանաբարութիւններ,
անորոշ անխաղիչ, նախադրուածներ, ան-
ստորագիր նամակներ և քանի դնում դրանց թիւը
աւելանում էր: Սպերանսկու թշնամիները գործը
չառ ճարպիկ կերպով էին առաջ տանում Սպե-
րանսկու դէմ դաշն կապած մարդիկ կայսրի առաջ
իրանց միմեանց թշնամի էին ձևացնում, որ կայա-
րը չը կասկածի թէ նրանց բանաբարութիւնները
սարքած բաներ են: Եւ կայսրը թէ է բոլորովին
չը հաւատաց նրանց, բայց կորցրեց անպայման
վստահութիւնը դէպի նա և հասարակաց կարծիքին
բաւարարութիւն տալու համար արտասուք աչքե-
րին ստորագրեց Սպերանսկու Սիբիր աքսորելու
հրամանը: Խաւարամիտները ժամանակաւորապէս
յաղթեցին, բայց անապառ պատմութիւնը պարզեց
վերջի վերջոյ նրանց բոլոր միջնապարկութիւնները,
ապացուցեց Սպերանսկու անպայման անմեղու-
թիւնը և խայտառակութեամբ ծածկեց նրա ստոր
հակառակորդների անունը: Սպերանսկի Ալեք-
սանդր կայսրի յաջորդի ժամանակ նորից միլիտար

նակներ մեր ճանապարհը խօսելով ընկերութեան
յաջողութեանց մասին: Մեր տեղացի ծանօթը
ցոյց կը տայ մեզ դիւրի եղբրը բարձրաւանդակի
վրա մի բաւական գեղեցիկ չէր: Ռուսական-
բայ ընկերութեան ծախսով շինված դարոցն էր
սա. կը պատմէր նաև թէ չէր ինքն համար եղած
ծախսերն յետոյ ընկերութիւնը տակաւին ևս
300 լրա դուր դրամագուլուն ունի, և թէ այդ
դրամագուլուն տոկոսը ուսուցչաց թոշակին պիտի
յատկացվի: Այս շատ հետաքրքրաշարժ խօսակ-
ցութիւնը մեզ զարոյց հասցրաւ: Մեր ծանօթը մի
տեսակ հպարտութեամբ ցոյց կը տայ մեզ դարո-
ցի մի անկիւնը դարձված մի քանի հին և նոր
գրքեր, ապագայ դրատան սկզբնաւորութիւնն էր
սա:

Հիւսեյնիկը կամաց կամաց մի բարձր նշանա-
կութիւն առաւ: Գոհութեամբ կը տեսնէ թէ
Խարբերդի պարզ գիւղացին հոգատար էր իր ա-
պագայն տեղեկութեան, առատաձեռն էր, երբ խն-
դիր կրթութեան վրա է, այն ինչ մեր երկրի
մէջ տակաւին շատ գիւղացի երիտասարդներ
մտքերի անկիւնն իսկ չեն անցկացրել կրթու-
թեան օրումը, և այն գործութիւնը, որ առաջ կը
գալ, եթէ երիտասարդաց բաժան գործութիւնները
միանան մի բարի նպատակ, մի կրթական խնդիր
առաջ տանելու:

Ժողովի դանդաղ հնչեց, մի յարմար անկիւն
նստած կը սպասեմ տեսնել ժրջան երիտասարդ-
ների մի փառաւոր խումբ, որոնք գործի վրա քիչ
առաջ տեղեկացել էի: Մի ազնիւ հիւր սկսեց
խօսել ընկերութեան նուիրական նպատակի վը-
րա, կրթութեան պէտքերի վրա. յայտնի էր թէ
ստեղծագործ պարտք մասնաւոր պատրաստութեամբ
էր ելած ժողովի առաջ: Բայց մի բան, որ ինձ

116. 117.

թիւն, դրա դէմ ոչինչ կարելի չէ ունենալ, որովհետեւ դա շատ մանր փառասիրութեան արգասիք է, սակայն մասնաժողովի անդամները թող լաւ հասկանան, ա), որ անցեալ սեզոնի վնասն է՝ 3113 ր. 59 կ. և այդ վնասը լրացրել են «Իրանց սեփական միջոցները» և այն անձինք, որոնք անցեալ տարի հանգանակութեան ժամանակ նուիրեցին իրանց «լուսն», և ի թիւս որոց կան և 200-ական բուրլի նուիրողներ... և բ), որ նոյն այդ մասնաժողովի պ.պ. անդամները ծախսել են 2843 ր. 32 կ. դրամագումար:

Ինչ և իցէ եղածն եղել է. թող անցեալը մեզ համար խրատ լինի և եթէ «Արեւիկ» վարչութիւնը չը կամենայ իր ղեկավարութեան ներքոյ առնելու մեր թատերական գործը և առաջնկայի համար կրկին ստիպւած լինենք նոր մասնաժողով ընտրելու, զոնէ յանձնենք այդ վնաս գործը հմուտ և գործին տեղեակ անձանց և յուսանք որ եթէ սխալման ընտրվին այնպիսիները, որոնք առաջուց զիտցած լինեն իրանց անձեռնաստութիւնը, ինչպէս որ անցեալ տարի պատահեց, այդպիսիները զոնէ այնքան խոհեմութիւն և պարտաճանաչութիւն ունենան, որ մի կողմ թողնելով անձնական փառասիրութիւնը, համեստաբար հրաժարվին այդ պատուից, որպէս զի ձեռնհաս և ընդունակ անձինք ասպարէզ կ'ենեն:

Ա. Ալլահվերեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չանազան կողմերից հեռագիրներ ենք ստանում, որոնցով հնորաւորում են Հայրիկի ընտրութիւնը:

Լ.ՋԱՄԻԱՆԻՅԻՑ մեզ հեռագրում են՝ ապրիլի 6-ից. «Ամբոյնի վրա ահագին տղաւորութիւն է արել այն փառքը, որ 72 տարեկան խրախոս Հայրիկ ընտրվեց 72 ձայնով»:

Մեր բանաստեղծ Սիրառ-Շահադիզ, Մօսկվայից, բացի այն 200 բուրլուց, որ նա մի քանի ժամանակ առաջ էր ուղարկել, այժմ էլ ուղարկել է յօգուտ «Հրատարակական ընկերութեան» 200 բուրլի:

Ա.Լ.ԲԱՍՄԱՆԻՅԱՆ մեզ գրում են, որ նախագահական թղթաւորութիւն չը ստանալու պատճառով էժմանագին գրադարան այդ քաղաքում չի բացվի:

Կովկասի բոլոր կողմերից, ինչպէս մեզ տեղեկացնում են, անթիւ հեռագիրներ են ուղարկւում յետադարձ, որոնցով զանազան չըջանի և զանազան դատակարարի մարդիկ՝ հնորաւորում են խրեմեն Հայրիկի ընտրութիւնը:

Կան ստախոսներ, որոնց մասին մեր ժողովուրդը այսպէս է ասում. «Եթէ Զատիկ օրն էլ ասի՝ Գրիգոր յարեաւ, չը հաւատաք: Եւ միաժամ, մայիսի 7-ից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Այն հեռագիրը, որ տղել է Սպանդար Սպանդարեան իր թերթի № 74-ի մէջ, որ իբրեւ թէ նրան առաջարկւած է եղել իշխանել Տեղակալ սրբազան Ներսիսի ընտրութեանը... կատարելապէս կ'եղծ է: Հաղորդում եմ Տեղակալի թղթաւորութեանը: Ստորագրած է՝ Եփրեմ վարդապետ»: Տպագրում ենք այդ հեռագիրը իբրեւ անձնական հերքում, և ոչ թէ հասարակութեանը մի նոր բան հաղորդելու համար, որովհետեւ ամենքն էլ վաղուց գիտեն, որ Եւփրեմից Սպանդարեանի ուղարկած հեռագիրը կեղծ է:

Մեզ հաղորդում են, որ մայիսի 16-ին կայանաւոր է Հրատարակական ընկերութեան ընդհանուր ժողովը:

Կ. Պօլից «Кавказ» լրագրին գրած մի թղթ-թատիկում մէջ գտնում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի կէտը. «Թիւրքիայից ընտրված պատգամաւորներին Եւփրեմին գնալու համար վերջին բազմաթիւ անապատելի դժուարութիւն հանդէս կ'եկաւ: Պատրիարքը տուել էր պոլիցիայի միջնորդին զանազան թիւերում ընտրված պատգամաւորների ցուցակը, բայց այդ ցուցակը թերի էր: Ընտրվող պատգամաւորները գիտում էին պոլիցիայի միջնորդին, պահանջելով անցագրեր, բայց միջնորդը մերժում է անցագրեր տալ այն անձանց, որոնց անունը չը կար պարտիզանի ցուցակում: Փաստը կարօտ է բացատրութեան:

Այսօր, չարաթ օր, ամսիս 9-ին, նշանակւած է «Հայուհեաց Բարեկցութեան ընկերութեան» ընդհանուր ժողով, կար ու ձեռն ուսումնարանում, երեկոյեան 6 ժամին: Հերթական մի քանի հարցերը վերջացնելուց յետոյ, պէտք է ընել մի հետաքրքրական առաջարկ, այն է կար ու ձեռն ուսումնարանում խոհարարական բաժին մտցնելու հարցը, որին, անկասկած, ընկերութիւնը համակրութեամբ կը վերաբերվի: Վերջում պէտք է տեղի ունենայ վարչութեան երեք անդամների ընտրութիւն:

«Кавказ» լրագրի հեռագիրը՝ Եւփրեմին ընտրվածներից յետոյ տեղի ունեցած ճաշկերպի մասին, մենք էլ ենք թարգմանել «Մշակ» այսօրվայ համարում, և «Արձագանք» էլ իր երկնայ համարում: «Кавказ» ասում է, որ իրի մեանի կենացը երկու անգամ առաջարկվեց, իսկ խղիւղեանի կենացը մի անգամ «Արձագանք» գրում է գրում «Երկու անգամ» բառը: «Кавказ» ասում է, որ խմբից Արիստակէս եպիսկոպոսի կենացը, «Արձագանք» այն էլ է գուրա գցում: Ինչ կ'ասված, որ գուրա է գցել և այն կտորը, որը վերաբերում է Ներսիս և Արիստակէս սրբազաններին և Գրիգոր Արքեպիսկոպոսին: Մենք ուշադրութիւն չէինք դարձնի այդ երկու սրբական բաների վրա, սակայն անսերիլ է այդքան կողմնապահ լինել և ուրիշ լրագրից վերցրած հեռագիրը խմբագրել իր քեֆի համեմատ:

Պատկանանցի օգտին ստացանք Մատնանցի ձեռքով Բագուում, Տեր-Գրիգորեանցի տանը ժողոված 3 ր.: Նախկին 662 ր. 55 կ. գումարի հետ ունենք այժմ 665 ր. 55 կ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՐԻԱՅԻՑ

Վիեննա, մայիսի 7-ին
Այսօր կարդացինք ուրախութեամբ պ. Կարա-Մուրզայի «Մշակ» 42-րդ համարում հրատարակած հետաքրքիր յօդուածը. «Ուրախ ենք, որ ասիւրի մասնագէտ և Վիեննայի Միջինարեան հայրերի արծարծած հարցով ամենից շատ հետաքրքրվող ու գործին քաջ ծանօթ անձ՝ իր ձայնը բարձրացրեց ցոյց տալով այն ամեն հնարաւոր միջոցները, որոնց պէտք է դիմենք Վիեննայում կայանալի «Միջազգային-թատերական-երաժշտական ցուցահանդէսին» մասնակցելը կարելի կացուցանելու համար: Հարցը դժբաղդաբար քիչ ուշ է սկսվել: Գուցահանդէսն այսօր արդէն բացվեց, այլ ևս ժամանակ կորցնելու չէ, պէտք է շուտ անել, հեռագրով յարաբերութեան մէջ մտնել. նամակների տեղադրութիւնը երկար է: Գուցահանդէսին մասնակցելու համար հարկաւոր է ամենից առաջ նրա մասնաժողովի համաձայնութիւնը ստանալ, նրա հետ պէտք է յարաբերութեան մէջ մտնել: Ինչպէս արդէն առաջին նամակովս յայտնեցի՝ այդ քայլն արդէն արել ենք, բայց քանի որ մինչև օրս Կովկասից մասնակցելու լուր չէ ստացվել, չենք վստահւում յանձնաժողովի մեր առաջարկութեան տալի պատասխանը արագացնել, որովհետեւ ամենից առաջ յանձնաժողովի հետ գործ ունեցողներին համար պարզ պիտի լինի մեր ինչ եղանակով և քանի հոգով մասնակցելու խնդիրը: Պ. Կարա-Մուրզայի արած չորս տեսակ առաջարկութիւնների մէջ, մեր կարծիքով, ամենալաւ և հեշտ ու շուտ գործադրելին բ) տեղակն է, ա) քիչ է, գ) հանգամանքների ենթարկված, իսկ դ) «Հայուհեանց մի մեծ 60 հոգուց բաղկացած խումբ», թէև իրաւ ամենից ցանկալին է և ամենամեծ տարւորութիւն կը թողնէր, բայց կարծում ենք խիստ թանգ կը նստէր համաձայնելով անգամ, որ «այդ չորսից պէտք է ընտրել աւելի լաւագոյնը և ոչ թէ էժմանագիրը», կարելի է այդ:

Պ. Ներսէս Դաւթեանց ապրիլի վերջին Կովկաս է գնում. մենք այստեղից նամակով նրան դիմեցինք խնդրելով, որ գործի դրութիւնը իր տեղում խնամելով շուտով հեռագրով մեզ խնայ տայ: Հարցը զարթեցրած է, նրանով հետաքրքրվող անձնաւորութիւնները՝ գերապայծառ հ. Այտընեան, պ. Ն. Դաւթեանց և պ. Կարա-Մուրզայ, ամենամեծ գրաւական են, որ եթէ մեր հարուստներն էլ իրանց սովորական բարեգործութեան ընթացքը փոխելով այս նոր գործին նիւթապէս օգնեն՝ ազգին պակաս ծառայութիւն մատուցած չեն լինի, քան իրանց միւս աղքատներ նուիրատու:

Թիւններով: Յանկալի էր, որ Կովկասի մեր միւս թերթերն էլ այս հարցով դառնէին: Ինչպէս վերը յիշեցի, ցուցահանդէսն արդէն բացվեց, անկարող լինելով այսօր ինքս ներկայ գտնվել այդ գործողութեան, առ այժմ կը ցանկաւորվի «Neue Freie Presse»-ի բացման նկարագրութիւնը, իսկ նրա կազմութեան և ընթացքի մասին կաշխատենք յետոյ անձամբ դիտել և ըստ չափու կարողութեան նկարագրել:

«Վիեննայում տեղի ունեցող ցուցահանդէսների բացումը կայսրի ձեռքով մինչև այժմ միշտ մի փառահեղ և փայլուն տեսարան է ներկայացրել, բայց զժառոգաբար այսօրվայ տօնին զգալի կերպով վնասեցին մի քանի հանգամանքներ. նախ՝ կառապանների գործադուրը (կառապանները դիտմամբ գործադուրը այսպիսի ժամանակ են դրոյել, երբ ցուցահանդէսի առիթով քաղաքս եկող օտարալեզուները երթնելով թանկ և շատ թանկ համար նրանց կարեւորութիւնը աւելի զգալի պէտք է կացուցանէ: Նրանք պահանջում են տակապի աւելացում, թէև օտարներն համար, մասնաւորապէս օտարալեզուները երթնելով թանկ և շատ թանկ համար 80 կրկնեցի, իրերով միտսին մի գուրդն քան. ուստաց փողով 1 բուրլի) ապա ամեն անթարթութեամբ անձրի կրկնող աղող ցուրտ եղանակը և վերջապէս մի ցուալի անկարգութիւն և խառնաշփոթութիւն հանդիսատեսի, որ հէց ամենահամարաւոր բազմութեան վերին ծաղկողութեան հաստէ:

«Կառապանների գործադուրը պատճառով հանդիսի հիւրերից միայն սեփական կառքեր ունեցողները կարող եկան, մինչդեռ հասարակութեան մեծագոյն մասը ստիպւած էր կամ ձիաքաշ երկաթուղի նստել կամ օմնիքուտ և այդպիսով նկատելի էին չքեղ կանաչը, բարձր դիմաւորականներ և աստիճանաւորներ զարդարված մեծ խաչով և այլ բարձր շքանշաններով: Ժամը 9½-ին ձիաքաշ երկաթուղու բոլոր վագոնները կառարկապէս լի էին: Հասարակութիւնը բարձրաձայն իր դժգոհութիւնն էր յայտնում, որ ձիաքաշի ընկերութիւնը չէ հոգացել հանդիսատեսը տանող կառքերի թիւն աւելացնելու: Ժամը 10—11-ը եղանակըն աւելի վատացաւ, կանաչը և մարդիկ ստիպւած էին իրանց չքեղ հագուստները վերադրուելու իսկ ծածկել:

«Գուցահանդէսի պարկում աշխատել էին ամբողջ գիշեր, ջանալով անձրի հեղքերը անհետացնել, ճահճալից դնացները անցանելի կացուցանել: Բաղմաթիւ մեծ և փոքր դրօշակները զեղեցկացնում էին հանդիսատեսի արտաքին տեսարանը: Ժամի 10-ին սկսեցին իրար ետևից այնտեղ հասնել բարձրաստիճան հիւրերը, իսկ 11-ին եկաւ կայսրը:

«Նուագածութեան սրահի գլխաւոր դրան (am Portal der Tonhalle) առաջ կայսրին դիմաւորեցին ցուցահանդէսի պատուաւոր և փոխ-նախագահներ, իշխանուհի Վետտենիւրի, միւս պատուաւոր ներկայացուցիչները և տեսչութեան անդամները: Նուագածութեան սրահում կայսրի համար էս-դրալէ էր կառուցված բալէթիմի: Գալերեան կանանց համար էր վերապահված, իսկ պարտնութեամբ պէտք է կայսրի առաջ հաւաքվէին պաշտօնական անձինք: Բայց երբ նա միջին դուռով ներս մտաւ, միւս բոլոր դռներից սկսեց հասարակութիւնը ներս լսածով և նրան յետ պահելու կամ կանոնաւորելու համար ոչ մի միջոց չէր գործադրված: Մի քանի անձինք այնպէս էին ձգտում դէպի առաջ, որ կայսրի շրջապատող անձանց վարդը լուծվեց: Իւրաքանչիւր ոք աշխատում էր էստորադէին հասնել, այնպէս որ նոյն իսկ բարձրագոյն աստիճանաւորները համար տեղ չը մնաց: Պարտններից շատերն անսանձ ջանքով ներս ընկնելով՝ դիմարկները չէին վերցրել, անկասկած անտեղեկ կայսրի ներկայութեան մասին: Խիստ օտարմոտ էր մասնաւոր վերջը, երբ ձառով կայսրին դիմում էին և նա պատասխանում էր, պարտնների մեծ մասը գլխածածկ մնաց և մինչև անգամ էստորադէի շատ մօտիկ կանգնած, ըստ երեւոյթին կրկնապէս անձինք դիմարկները չէին վերցրել: Զարմանալի էր, որ հէց այդ բազմութեան չէկաւ մի կարգապահ, որը հսկէր բարեհեռութիւնը պահպանելու և կարող վերականգնելու վրա:

«Գաղափարական իր դժգոհութիւնն էր յայտնել այդ անկարգութիւնների պատճառով: Կոմս Տաս-ֆել, որն առաջնորդում էր կոմսուհի Վիլմանսդոգին, այնպիսի ընդհարում մէջ էր ընկել, որ հար-

կաւոր էր միջնորդին օգնութեան դալ ամբոյնից հանելու համար: լուսաւորութեան միջնորդ Գառլեն կայսրի մօտ այնպէս էր ճնշվել, որ ոչ կարողանում էր առաջ գնալ, ոչ յետ և ձեռքերն օդ բարձրացնելով արտայայտում էր իր այդ անկանելի դրութիւնը: Այս անհաճ տեսարանները կրկնվել են նաև յետոյ՝ ցուցահանդէսը տեսնելու համար կայսրի շրջապատութեան ժամանակ:

«Երբ կայսրը նուագածութեան սրահը մտաւ, երեւցիլ խմբերը երեցին աղբային օրհներգը էստորադէի վրա՝ մինչդեռ հասարակութիւնը կեցցէներ էր կանչում, իսկ կանաչ գալերից թաշկինակներ էին շարժում: Երբ կայսրը էստորադէն մտաւ, առաջ եկաւ մարկգրաֆ Ալեքսանդր Պալ-լավիչի, իբրեւ ցուցահանդէսի յանձնաժողովի նախագահ և հետեւեալ խօսքերն ուղղեց կայսրին: «Ձերը Մեծութիւն, ամենաողորմած Տեր, Ձերը մեծութեան ողորմածութեամբ Վիեննայի նորից զօրեղ ընդարձակումից ի վեր մայրաքաղաքս առաջին անգամն է իր դռները բանում այսպիսի մի միջազգային տեսարանի համար:

«Այստեղ պէտք է գեղարուեստի գերագոյններից երկուսը՝ երաժշտութիւնը և դրաման տօնեն իրանց յաղթանակը. այստեղ վիճակված է աշխարհին ցոյց տալ նրանց գեղարուեստական, տեխնիկական և տնտեսական նշանակութիւնը, ինչպէս նաև նրանց զարգացումը:

«Երկրացի և արտասահմանցի մի խումբ ոգևորված անձանց ընդհանուր ջանքով գործը արդէն աւարտված է և ես ինձ թող եմ տալիս ամենախոնարհաբար խնդրելու Ձերը Մեծութիւնը, որ բարեհաճէ ցուցահանդէսը բացված հրատարակել»:

Այս խօսքերին կայսրը պատասխանեց. «Ինձ մեծ լաւականութիւն է պատճառում, որ այստեղ Վիեննայում, երաժշտութեան և դրամատիկական արուեստի այս հաւասարմով փայլալից միջոցով այդպիսի մի նշանաւոր հանրագում գործ կենդանութիւն է առել և—հնորով տեղացի և արտասահմանցի ամենաընդունակ ֆակտորները ժրպշան գործակցութեան և կամաւոր մասնակցութեան—հասել է իր աւարտման:

«Թող այս միջազգային գեղեցիկ ձեռնարկութեան դժուարաշխատ ջանքով և գնահատելի տուրկութեամբ ձգտված նպատակը ըստ կարելոյն կատարեալ լինի և թող նրա խնդիրները ամենայն կերպ աջող լուծում ստանան: Այս ցանկութեամբ ցուցահանդէսը բացված եմ համարում»:

Այս խօսքերին հետեցին ողևորված կեցցէներ, և քօրը երգեր, Հինգերի աշխուսան, որից յետոյ կայսրը երեցներցողներին հետ, առաջնորդութեամբ նախադասների, փոխ-նախագահների և ցուցահանդէսի մասնաժողովի հետագա նուագածութեան սրահից և դնաց դէպի արևմտեան դուռը, որ այնտեղից սկսի տեսնելու շրջանը: Այս դէպքում էլ, ինչպէս յիշվեց, տեղի ունեցան ընդհանուր խռովումներ, թէև հասարակութեան համար շատ տեղ կար: Նշանապէս դալերնայում, տիկնանց հասարակութեան մէջ տեղի են ունեցել անհանգիստ, անսանձ դէպքեր:

Եղանակը քիչ պարզել էր, այնպէս որ ժողովուրդը կարող էր շրջապայել պարկում, որովհետեւ խիտ կուտակման հնորով դժուար էր ցուցահանդէսի շինութիւնը, բոսոնդոն մտնել:

Փ. Տ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Պարիզից հեռագրում են. որ մայիսի 1-ին (13-ին) այնտեղ սկսվել են կանանց իրաւունքները պաշտպանող ընկերութիւնների կոնգրէսի նիստեր: Ռուսաստանից և Ֆինլանդիայից և ներկայացուցիչներ կան:

«Գերմանական մի քանի լրագիրներ խիստ կերպով յարձակվում են կանցեր Կապրիլի վրա, որը կորցնել տուեց ազգի հաւատը դէպի կառավարութեան ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Նրա ամենամեծ սխալը, ասում են դերմանական լրագիրները, կայանում է նրանում, որ նա չը կարողացաւ հաշտութիւն կացացնել իշխան Բիսմարկի հետ:

«Ուլմերտո թագաւորը վերջնականապէս վրձնել է սեպտեմբերին այցելութիւն անել Բերլին Վիլհելմ կայսրին:

«Չէրնոօբիլայի Նիկոլայ իշխանը, որպէս հաղորդում են գերմանական լրագիրները, կերթայ Պետերբուրգ իր որդւո՝ իշխան Դանիէլի ուղեկցութեամբ: Պետերբուրգից իշխանը կերթայ Կ. Պօլիս, ողջունելու սուլթանին և նպատակելու Սերբիայի և Չէրնօբիլայի բարեկամութեամբ Թիւրքիայի հետ:

